



„ИЗМИРАГАНЪ“
 Арменски хумористиченъ вестникъ
 Редак. и администр.
 „Веслецъ“ 13, София
 Բաժանորդագրութիւն
 25 րիւբ 50 լեվա
 «ԻԶՄԻՐԱԿԱՆ» ի
 համար կ'ընդունուին
 առեւտրական եւ այլ ամեն
 տեսակ յայտարարութիւններ
 խիստ դիւրամատչելի գիներով
 «ԻԶՄԻՐԱԿԱՆ» ի
 վերաբերեալ ամեն տեսակ
 նամակ, յօդուած եւ դրամ
 դրկել միայն հետեւեալ հասցեին
 Ս. ԻԶՄԻՐԱԿԱՆ
 վոստարկի քիւ 152, Սօֆիա

ՆՈՐ ԱՐԱՄԵԱՆՑՆԵՐ...

Ինչու չպիտի ուզէի դրիչ շարժել ու հետաքրքրուիլ այն գրչապայքարով, որ կարգ մը «ազգասէրներ» սկսած են կատարել թէ՛ Թուրքիոյ և թէ՛ բոլոր հայաշատ գաղութներուն մէջ:

Այս թիփերը, օրն ի բուն դրիչ կը շարժեն, կուրծք կը ծեծեն, կակորդիլոսի արցունքներ կը թափեն՝ հայ ազգին համար: Ասոնք յեղափոխական կոչումներ են և կամ համակիրներ, որոնք իբր թէ զլուծած այդ կուսակցութեան սխալներէն ու սխալագործութիւններէն, կ'ուզեն քողարկել ընել այդ կուսակցութիւնը, քայքայել գայն, որպէսզի հայ ազգը փրկուի... և այս հայասիրական գործը գլուխ հանելու համար՝ իրենց ձամբուն վրայ կը գրտնեն թուրքը... կը փառարանեն գայն, ծուկի կուգան անոր առջև, կը խոստովանին թէ իրենք սխալած են յեղափոխականներուն երեսէն, կը լիզեն իրենց եղբայրներուն արիւնոկաններուն երեսէն, կը լիզեն իրենց եղբայրներուն արիւնոկաններուն վրէժնամբին պիղծ ձեռքերը, կ'ուրանան իրենց ազգային սրբութիւնները, իրենց Աստուածը, Քրիստոսը... և խունկ ու մոմ կը վառեն անոնց Ալլահին ու Մոհամմէսին առջև:

Վեց հարիւր տարիէ ի վեր մարդկութեան աղար և Քրիստոնէութեան դահիճը եղող, անցած տեղը քար քարի վրայ չձգող վանապահան թուրքը, իբր քաղաքակիրթ ժողովուրդ կը ներկայացնեն ու իրենց չորսալիք բերաններով ու գրիչներով անոր պրոպագանտը կ'ընեն:

Մենք չպիտի հետաքրքրուէինք այս լարժուն թիփերով, պիտի թքնէինք ու անցնէինք... երե անոնք չհաշտուէին մեր կարգ մը կուսակցութիւններուն ու միութիւններուն կողմէ, որոնք անգիտակցաբար նոր Ս.Ր.Ա.Մ.Ե.Ա.Ն.Յ.Ն.Ե.Ր.Ու Մ.Կ.Տ.Ի.Զ.Ե.Ա.Ն.Ն.Ե.Ր. կը սնուցանեն իրենց մամուլին ու ծոցին մէջ:

ՆԵՐԳԱՂԹԻ ՍՈՒԱԿՆԵՐԸ

Պուլկարահայութեան ծանօթ երկու ներդաղթի ստիակներ, որոնք դիչեր ցերեկ կը գեղգեղէին թէ, պուլկարահայերու ներդաղթը օրերու խնդիր է, թէ գաշակցականներու բաժնեւորուն ականջ մի կախէք, փորի ցաւ է եւլն: Ամիս մը պատանծեղէ յետոյ, հետեւեալը կ'երգեն. Պուլկարիոյ եւ Խ. Ռուսիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ չըլլալուն պատճառաւ, առայժմ անկախելի է ներգաղթը դեպի Հայաստան: Հարց կուտանք բոլոր կամաւոր կայրերուն միթէ նոր խըզուեցաւ պուլկար և ռուս յարաբերութիւնները, կամ ինչո՞ւ գաղթականները Յունաստանի ձամբով չեն ուղարկուի: Համար մէ՛:

ՌԱՏԻՈ «ԻԶՄԻՐԱԿԱՆ»

Ֆիլիթի:

Հ. Հ. Պատուիրակութիւնը, Թուրքիոյ Ազգ. Դաշնակցութեան մէջ մուտք գործելուն առթիւ, Ազգերու Դաշնակցութեան յուշագիր մը ներկայացուց հայկական իրաւունքներու պաշտպանութեան համար:

«Փարոս» ի իմաստուն խմբագիրը շատ անապարեց իր «Նեղինակաւոր» կարծիքը յայտնելու: Ըստ իրեն՝ այդ տեսակ յուշագիրներ ծիծաղելի եւ աւելորդ բաներ են, և ժամանակը չէր այդ տեսակ «անանկացած» պատուիրակութիւններով այդ տեսակ ծիծաղելի յուշագիրներ ներկայացնելու:

Եւ անա շարաթ մը վերջ Փարիզի ռամկավարներն ալ նոյնիմաստ յուշագիր մը ներկայացուցին Ազգ. Դաշնակցութեան քարտուղարութեան:

— Է՛ն իմաստուն խմբագիր, ի՞նչ կ'ըսէք մէկ շարաթը բաւական էր ժամանակը հասած ըլլալու համար և ձեզի ամօթով ձգող (բարեբախտաբար վաղուց հրամարած էք ամչնալէ) ձեր Փարիզի ռամկավար արտարիկներուն յուշագիրը աւելորդ և ծիծաղելի չէ՞ր:

ԽԱՍՔՈՎՈՅ.— Սլիվէնի կրեաններուն կողմէ պատուիրակութիւն մը հոս ժամանեց, բողոքելու համար Սլիվէն բանակումի եկած Հ. Մ. Լ. Մ. ի անդամներուն դէմ, որոնք այդ շրջանին մէջ ոչ մէկ կրեայ ողջ չեն ձգած: Իրենց բոլոր ձաշերը կըրիայի միտով եփած են: Տեղույս կենդանիներու պաշտպան ընկերութեան նախագահ պր. Ֆրանկիւլի կիւլմէզեան լսելէ վերջ պատուիրակութիւնը, պէտք եղածը կարգադրեց:

ՄԱՀԱԶԴ...

14 Օգոստոս

«Անցեալ Յունիս 8ին, 1300րդ տարեդարձն էր մեր Մուհամէտ մարգարէին:

«Սոֆիայի հայկաւոր և արեւելեան բուլկարացիներու և արեւելեան ազգերու պատմութեան դասախօս փրոֆ. Յակոբ Մարթաեան այս առթիւ հայերէն յօդուած մը հրատարակած է: Փրոֆէսորը ըսելէ յետոյ թէ Մուհամէտ մարգարէն մարգարէներուն ամէնէն անկեղծն է, մահուան տարեդարձին առթիւ կը պանծացնէ անոր մեծ անունը: Փրոֆ. Մարթաեան թուրք պատմութեան և թուրք լեզուին մասին եւս երկար ուսումնասիրութիւն մը հրատարակած է: Իր այս ուսումնասիրութեամբ Փրոֆ. Մարթաեան կը հաստատէ այն տեսակետերը, որոնք պատշաճաբար կ'ընկերի պատմութեան համաժողովին մէջ»:

«Վ.Ա.Գ.Ը»

ՍՈՅՈՒՄ.— Խուճը մը գնչուներ Ս. Աստուածածինի օրը հայոց եկեղեցիէն ներս խուճեցին մատաղ բաժնուած ատեն:

— Այլ պիղիմ քուրպան պայրամը կելմիչ ատէ հասկերիմիզ եօքը սելով: Խեղճերը «Արծիւ» թուրիստականի կանանչ դրօշակը շփոթեցին իրենց դրօշակին հետ: Կը յուսանք որ յետ այսու մեր թուրիստները իրենց ազգային դրօշակն ալ միութեան դրօշակին կողքին կը պտտցնեն ի՞նչ ազգի թուրիստ ըլլալին հասկցնելու համար, հոգ չէ թէ այդ դրօշակը ըլլայ նոսրոյն կամ...:

ՄԵՍ ՀԱՅՐԻԿԻՆ ԱԼ...

ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

ԾԵՐՈՒԿԻՆ ԱՆԿԻՆԸ

ԶԳՈՒՇԱՑԷՔ

Հազիւ ամիս մը եղեր էր Աշխէ- նի և Երուանդի ամուսնութիւնը...

— Երուանդ, ի՞նչ կ'ըլլայ, սասի- կարը մի՛ ծխեր, կը վախնամ որ առողջութեանդ կը վնասէ...

— Սակայն, հոգեւոր կ'ըլլայ... կը պա- տասխանէ Երուանդ...

— Ինչո՞ւ անկարելի ըլլայ... ձը- դէ՛, սիրունիկս, ձգէ՛...

Ան «ձգէ՛, սիրունիկս ձգէ՛»ն կը յաղթէ սակայն հոգեակա»ին...

Ամիս մը կ'անցնի ու այդ անց- նող ամիսը իր հետ կը տանի նաև Երուանդի առողջութիւնը...

Ան Աշխէն որ ամէն դադանիքի սեղանի կը պահէր իր մայրը...

մեկամտ ձուռ է... Թուլութիւն մը կը տիրէ իր վրայ, թէ՛ հոգեկանին թէ՛ մարմնականին...

Մայրն ալ բաւական կը զարմա- նայ իր նոր փեսին թուլութեանը վրայ...

Նոյն գիշերը անկողնին մէջ, երբ Երուանդ դարձեալ կը պատրաս- տուէր կոնակ դարձնել իր հոգեա- կին, Աշխէն բռնի դայն իր կողմը դարձնելէ յետոյ՝

— Երուանդ սիրունս, ի՞նչ ե- դու քեզի՛ ըսէ՛, եթէ հիւանդ ես, բժիշկը կ'անչել տամ...

— Հոգեակս, կը պատասխանէ Եր- ւուանդ, ես ալ կը զգամ թէ թուլու- թիւն մը կ'իշխէ վրաս որուն պատ- ճառը դո՛ւն ես...

— Ե՛ս... ե՛ս եմ պատճառը քու թուլութեանդ...

— Այո... որովհետեւ դուն ու-

— Մայրը կը սիրես թէ աղջիկը: — Ես աղջիկը կը սիրեմ, սա- կայն մայրն ալ լաւ է: Միայն չը- դիտեմ ինչ ընեմ որ կարողանամ աղջկան գրաւել:

— Ծարժէ աղջկան նախանձը:

— Ի՞նչպէս: — Աշխատէ որ աղջիկը վրայ հասնի ճիշտ այն ատեն, երբ մօրը հետ սիրաբանութեան մէջ ես: Աղ- ջիկը անպատճառ քեզմով կը տար- ուի:

— Հրաշարի միտք: Երեք օր յետոյ խորհրդատու ըն- կերը կը հարցնէ՝

— Հը ի՞նչ եղաւ: Յաջողեց՞ար:

— Ա՛յ, դորդը տանի:

— Ի՞նչ է պատահած:

— Մայր ու աղջիկ ինձ աղախնի հետ բռնեց ինչ: Հիմա երեքն ալ կ'ուզեն հետս ամուսնանալ:

* * * Կոմսը ծառային:

— Ջօն, կ'երեւայ թէ անտարբեր չես տիկնոջ սենեկապանուհու նը- կատմամբ:

— Թոյլ տուէք նկատելու, պա- ռոն կոմս, որ ան իմ գործն է:

— Այո՛, իսկ եթէ դուք անոր մայր դարձնէ՞ք:

— Ան ալ իմ գործն է:

— Բայց պէտք է ամուսնանաք անոր հետ:

— Ան մեր երկուքին գործն է:

— Յամենայն դէպս եթէ չընէք ինչ որ պիտի ընէք, ես դուքս կ'ը- նեմ ձեզի:

* * * Ամէն զոքանչ գրեթէ մէյ մէկ պատերազմական նախարար է:

* * * Բանազողը հաւի չափ կրնայ թռչիլ և կ'իջնայ վար:

* * * Հայտնի լը փոնկտալու կը նմանի, երբ կուգայ՝ չես կրնար զսպել:

զեցիք որ այլևս սիկառ չծխեմ... և ես...

Այս որ կը լսէ Աշխէն, անմիջապէս դուքս կը ցատկէ մահճակալէն ու սպասաւոր մը կ'անչելէ յետոյ, կը չբամայէ տուփ մը սիկառ բերել աւտով:

Քանի մը վայրկեան վերջ սիկա- ռի տուփը կուգայ և Երուանդ անոց- մէ քանի մը հատը կը մտխրացնէ: Աշխէն՝ այդ գիշերը շատ առողջ նստաւ իր ամուսինը... նոյնիսկ քիչ մը կրակոտ գտաւ զայն...

Յաջորդ օրը Աշխէն եղելութիւնը կը պատմէր իր մօրը ու կը հրամա- կէր սպասաւորին որ տուփ մը սի կառ առնէ դարձեալ: Ասոր վրայ մայրը ուրախ չեշտով մը սպասա- ւորին՝

— Տղա՛ս, մի՛ մոռնար, երկու տուփ ալ մեծ էֆէնտիին համար առ...

Անդիէն մեծ մայրիկը որ ծայրէ ծայր մտիկ ըրած էր խօսակցութիւ- նը, կմկմալով ըսաւ:

— Տղա՛ս անանկ ալ կ'երթաս ա- նանկ ալ, չորս տուփ ալ մեծ հայ- բիկին ա՛ռ... չմոռնաս...:

Անկարելի բան էր որ, վեր- ջի մէկ երկու ամսուան մէջ, չփորձուէի թրքանալ, եթէ քիչ մը աղգայնական համոզումնե- րըս և քիչ մըն ալ թուրքերու հետ ունեցած պոչի ցաւերո չըլլային:

Մէկը միւսը գերազանցող դէպքերու և յաջողութիւննե- րու շարան մը, պատրաստուած կանոնաւոր ֆիլմի պէս ցուցա- դրուեցաւ արար աշխարհին, հաստատելու համար որ, չիք այլ աղգ բացի թուրքէն, և քիչ էր մնացեր որ հօրմէս ու մօրմէս ալ պիտի կասկածէի:

Եթէ թուրք եղած ըլլայի, անկասկած, որ այդ երանելի օրերը տեսնելէս վերջ, երկը- րորդ անգամ ըլլալով— Արդ արձակեալ զժողովս քո— ն կրկնէի:

Առանց մտածելու այլևս յետագայի մասին՝ այժմէն կա- րող եմ ըսել որ Թուրքիա իր սակեղարը կ'ապրի: Թուրք պատմագիրը խղճի կատարեալ հանդարտութեամբ կրնայ հե- տեւեալները գրել և ստորագը- րել (եթէ զանմիջ կ'ըլլայ, հո՛ս մէկը կայ, ես անոր գրել կու- տամ, միայն, Պոլիս մուտքի արտօնութիւն մը թող ձարուի «Մենք հանրապետականներ եմք» ռասսեւտող գործու և հին գլուխներուն վրայ... նոր գլխարկ կը կրէինք:

Մեր օրին անուեցաւ Մու- համմէդի 1300ամեակը ուր, հաստատուեցաւ Քրիստոսի... կեղծաւոր մը ըլլալը (տես ճէք Մաթիոնի երես 100-115):

Տօնեցինք թուրք գրական- նութեան 1200ամեակը, ուր պարզուեցաւ որ աշխարհի վը- րայ գիր գոյութիւն չունեցած ատենը մենք արդէն... «Սուլին- կէն» ի մարքան յիշեցնող գի- րեր ունինք կզեր:

(Վկայ Յիմարթեանի գրա- դարանը):

Մեր օրերուն, Այս Սոֆիա- յի ներքին ձեփերը քակելով հնութիւններ երեւան հանելու պարագան հանրապետութեան նախագահին աչքերը բանալով սորվեցուցին թուրք խլխլած պատմութեան ձեփերն ալ քա- կել: Երեւան եկաւ որ, թըր- քութիւնը մարդկային քաղա- քակրթութեան ո՛չ թէ միայն օրբանը այլև... գերեզմանն ալ է եղեր: Հին, չարալ փութալ գիրերը նստեցինք տեղը բե- րինք «նոր թուրքերէն» գի- րեր, վասնզի միւսները մաշած էին հազարաւոր տարիներու ընթացքին:

Հակառակ որ Թուրքիոյ 14 միլիոն՝ բնակչութեան կէսէն աւելին ֆրանկախոյ վարակ-

ուած էր չյուսանաւեցանք, վա- սընզի, հանրապետական և թիւրք օղլու թիւրք սերունդ մը կը հասնէր, որուն 7-8 տարե- կանները... իրարու փոք հա- ցի դանակ կը մխէին, 6 տա- րեկաններն ալ կացինով... ի- րենց հայրերը կը ստակեցնէին (ձեռքերնիդ վատ օր չսեսնէ աղաք):

Հայկական վիլայէթներէն վաղ անցնելու պատրաստակա- մութիւն ցոյց տուած ըլլալ- նուս համար, ժընեւի մէջ... երկու կաշեկազմ աթոռ նուի- րեցին:

Աշխարհի գեղեցիկութեան մրցանակը մեր ներկայացու- ցիչ օրիսորդը շահեցաւ, (բան մը որուն ինքն ալ դեռ չի հա- ւատար) պատճառ ըլլալով որ Բիէր Լօթի մէկ բարեկամը Պոլիս դայ և... Ազիատէի գե- րեզմանը փնտռէ (Յտի Քուլէի յիմարանոցը փնտռէր նէ ինչ- պէս կըլլար):

Ըսէ՛ք, այսքան խայծ բա- ւական չէ՞ որպէսզի թուրքը բուրբէն աւելի սիրէք:

ՍԻՄԵՈՆ ԾԵՐՈՒՆԻ

ԱՇՈՒՂԱԿԱՆ

Դուն Դրախտի խուչ, Ես մութի պայտուչ, Դուն վարդ ես սնուչ, Ես մարդ մըն եմ փուչ Դուն բշխանուչը Անիշխանական Ես անօթի եմ, Ա՛յ աղջիկ զո՞՞յ:

Քեզի չունենալ Մեռելի զանդ է, Ու կեանքս անքեզ՝ Մահու սուր ճանկ է, Աշխարհը անքեզ Յաւերսե ցանք է, Անքեզ ամէն բան, Ծուռ ու ցուցանք է:

Քեզի ունենալ Վանասօր կեանք է, Քանզի ծոցըդ Նեքդարի հանք է, Կուսանաց վանք է, Ղարիպ անքեզը Կ'ախորժի անկէ:

ԻՆՁ

— Դրամը ի՞նչ է, — Մարդ կոչուած մէքէնան բանեցնող չաղին:

— Դրամօժիտը ի՞նչ է, — Աղջիկներուն անցադիրը — Բժիշկներուն սխալը ի՞նչ կը ծածկէ:

— Բանն ու բրիչը, — Կախներու պատճառները ի՞նչ է:

— Իմս, քուկդ, ես, դուն, — Կանայք ի՞նչ գաղանիք կրնան պահել: — Իրենց տարիքը:

ԲԱՆՋԱՐԵՂԷՆՆԵՐ

Ահա բանջարեղէններու ազգեցութիւններ իբրև դարման դանսական անհանգստութեանց:

ՄՆԵՒԵԿ.— (գուշ գոնմազ) Թոքերու և երիկամուռնքներու մաքրութեան կը ծառայէ: Դրժուարաչնչութեան պարագային բարերար ազդեցութիւն կ'ընէ իր պարունակած գործարանային ազդերուն շնորհիւ: Ծառ յարգելի և սննդարար է:

ՃԱԿՆԻՆՂ (բանջար).— Մարսողութիւնը կը դիւրացնէ, աչքերու, լեարդի և մարմնի անհանգստութեանց դէմ դարման. տերեւները ճիշտ շոմինի նման կը գործածուին, օգտակար է:

ԿԱՂԱՄԻ.— Հուժ փրճակի մէջ աղցան ընել, այլ բանջարեղէններու հետ աւելի դիւրամարս է: Մանրարար է և հարուստ կենսանիւթերով հակալնդարային յատկութիւն ունի: Յօդացաւի համար լաւ է, նաև աչքի և դժուարաչընչութեան համար:

ՄՏԵՊՂԻՆ.— Ջղային անհանգստութեանց համար լաւ է: Մորդը կը գեղեցկացնէ: Կը պարունակէ դառիկ և այլ գործարանային աղեր: Ստեպլին, կաղամբ (հում) և սոխ, նաև կանանչ պղպեղ և թօմսթէս խառն աղցան ընել, ձէթ և լեմոն քամելէ յետոյ մէկ ժամ թողուլ աւանդէ առաջ, լաւ մը բաղադրուի: Զգո՛ճ շատ աղ չդրուի:

ԿԱՐՈՍ (քէրէվիղ).— Ջղացաւութեան, յօդացաւի, լեարդի և երիկամուռնքներու լաւագոյն կերպով կ'օգնէ: Մընդարար է, հարուստ գործարանային աղերով:

ՀԱՋԱՐ.— Երկաթ շատ կը պարունակէ, որով անարիւն մարդոց համար լաւագոյն ուտելիք մը: Անքունութեան դարման: Ստամոքսի բորբոքմանց և անմարսողութեան համար կը յանձնարարուի:

ՋՐԿՈՏԵՄ.— Արիւն մաքրող, լեարդի համար օգտակար է, նոյնպէս երիկամուռնքներու համար, անարիւնութեան դէմ դարման: Նոյնպէս միզամանի անհանգստութեանց համար ջերմապէս կը յանձնարարուի:

ՀՆԴԻԿ-ԱՐՄԱԻ.— Ջերմի, հարբուսի, դեղնցաւի եւ լնի կամար օգտակար է:

ՇՈՄԻՆ (սպանաք).— Անարիւնութեան համար լաւագոյն սնունդներէն մին: Հարուստ է բնական երկաթով: Սրտի անհանգստութեանց, ստամոքսի, աղեաց և երիկամուռնքներու համար օգտակար:

ՍՈՒ.— Մարմնին համար բնական մաքրիչ մը, արեան սնունդ մը, անքնութեան դարման, նաև ջղայնութեան հա-

ԼԱԻ ԴԱՍ ՄԸ

Իշխանին մէկը հացկերոյթ մը տուաւ որուն ներկայ կը գանուէր նաև Տէքարդ մեծ փիլիսոփան:

Ոչինչ կը պակէր այս փառաւոր կոչուէքին:

Մեր փիլիսոփան մեծ ախորժով մը ճաշակեց այն ամէն համեղ ու գեղեցիկ բաները որ սեղանը կը ճոխացնէին:

Սեղանակիցներէն մէկը գիտահանրը ծաղրելու նպատակով իր խօսքը անոր ուղղելով ըսաւ. «Ծառ դարմանալի է որ, փիլիսոփաները գեղեցիկ բաները գնահատել գիտեն»:

Տէքարդ, իր սովորական պաղարիւնութիւնով, դարձաւ գէպի իր խօսակիցը ու ըսաւ. «Աւելի դարմանալի պիտի ըլլար կարծել թէ գեղեցիկ բաները ստեղծուած են ազգայնորէ համար»:

ՃԱՇԱՐԱՆԻՆ ՄԻՋ

Տիկինը.— 20 լէվա մէկ «դառն Պուաը»ն աճելի սուղ է, պարո՛ն:

Կարոտնը.— Ո՛հ սիրելի տիկին, ձերինը մեզի աւելի սուղի կը նստի...

* * *— Ա՛յ այսօր սա հաշիւս մաքրէ՛:

— Եղբայր, դուն ալ միշտ անյարմար ժամերուն կուգաս՝ պահանջք ուղղելու:

— Ե՛րբ դամ որ յարմար ըլլայ:

— Իմ տունը չեղած ատենս եկուր:

* * * Եթէ գնես այ՛ն ինչ որ պէտք չունիս, մօտ ատենէ պիտի ծախես այ՛ն որուն պէտք ունիս:

մար պիտանի դեղ:

ՍՈՏՈՐ.— Բնական հականերխիչ մը: Օգտակար է ջերմի ջղայնութեանց, եւ այլն. նաև դժուարաչնչութեան համար:

ՎԱՐՈՒՆԻ.— Դէմքի բորբոքմանց, միզամանի վէրքերուն համար օգտակար, նաև մորթը կը նրբացնէ: Ստեպլին և վարունգ հիտնալի կերպով կ'օգնեն մորթի մաքրութեան և դեռ ուրիշ շատ օգտակարութիւններ ալ ունին:

ՃԱՐՀՐՈՒԿ.— Թոքերու անհանգստութեանց և ջրգողութեան, լեարդի և երիկամուռնքներու հիւանդութեանց համար մեծապէս կը յանձնարարուի, իսկ արմատներէն լաւագոյն ըմպելի կը պատրաստուի, արեան համար որպէս նպաստաւոր սնունդ:

ՍՍՄԻՉ.— Լեարդի, փայծաղի անհանգստութեանց համար օգտակար դարման կը ձանջուի:

ՊԱՐՏԱՏԵՐԵՐԸ

ԻՆՉ ԿԸ ՊԱՍԱՍԻԱՆԵՆ

— Գիտե՛մ ուշացուցի՛նք, ազնիւ պարո՛նս. կ'աղաչեմ, ներողամիտ եղի՛ր, իրաւ որ ամօթով մնացի, քիչ օրէն կը կարգադրենք, անհոգ եղի՛ր:

— Ապահով եղի՛ր, գալ շաբթուան պատճառ կը վճարեմ:

— Մի՛ աճապարեք եղբայր, գըրպանդ գիտցի՛ր, մինչև ամսագլուխ ստակդ կ'առնես:

— Նեղութիւն ունիմ, քիչ մը ատեն եւս սպասէ:

— Այսչափ համբերեցի՛ր քիչ մը ատեն ալ սպասէ ի՞նչ կ'ըլլայ:

— Միաքս է եղբայր, պիտի վըճարեմ, բայց առ այժմ պատրաստութիւն չունիմ:

— Այսօր վճարումներ ունիմ, գալ շաբթու եկուր:

— Հիմա չունիմ, բայց շաբթու մէջ բան մը կընենք:

— Մեծ բան մը չէ՛, կուտանք, ուրիշ անգամ եկուր:

— Ես ուզել չեմ տար, սիրելիս, ունենամ նէ կը հանեմ կուտամ:

— Մինչև հոս դալու ձանձրութիւն մի ունենաք, ես անձամբ կը բերեմ:

— Ունեցած ատենս չես դար, դժբախտաբար այժմ ալ գաճան ստակ չկայ:

— Հիմա չեմ կրնար, վաղը կամ միւս օր հանդիպէ:

— Համբերութիւն, քիչ ատենէն կը վճարուի, Աստուած ողորմած է:

— Կ'աղաչեմ ամիս մըն ալ համբերէ:

— Դուն մենէ չես կորսնցներ յաջողութիւն մը ըլլայ նէ՛ էն առաջ քու ստակդ պիտի տամ:

— Ծառը գնաց, քիչը մնաց, քիչ մըն ալ սպասէ:

— Տեղէ մը ստակ պիտի գայ, առնեմ նէ էն առաջ քու հաշիւդ պիտի փակեմ:

— Այնինչին հետ հաշիւ մը ունիմ, մինչև որ չի կարգադրեմ, մարդու ստակ չեմ կրնար տալ:

— Այս միջոցիս տունը հիւանդ ունիմ, անով զբաղուած եմ, ուրիշ ատեն եկուր:

— Աստուած ինձի ես ալ քեզի:

— Ես ալ շատ մը պահանջքներ ունիմ, բան մըն ալ չեմ կրնար կոր փրցնել, մէկ կողմէն առնեմ որ կարենամ միւս կողմէն պարտքեր հողալ:

— Քիչ մը առաջ գայիք, ի՞նչ ընեմ, ձեռն առաջ ուրիշներուն տըւի, ի՞նչ գիտնամ թէ այս պահուն պիտի գաք:

— Ի՞նչ է ան, եղբայր, ալ մարդ տալիք ունեցած չէ՛, կամաց կամաց ա՛ն:

— Աստուածս գիտէ ա, սիրտս կայ, բայց ձեռքս չկայ, ի՞նչ ընեմ:

— Այս օրերս չեմ կրնար տալ, մինչև ամսու վերջ պիտի սպասես:

— Կամաց կամաց ըսինք ես՛, հոգե՛ք երաւ:

— Գնա՛ բանիդ պէ, հիմա գործ ունիմ, փարա ուղեւոր ժամանակն է:

Նուէր՝ բուլղարահայերուն ծանօթ թիւ 2 փրոնեկտոր??? Թումանեան ԷՖԷՏԻԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԸ

ԹԻԵՐՈՎ ԵՒ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՎ

Համիդին մինչեւ Բեմալ, հայ բնաչընջումի ծրագիրը խիստ ուշադրութեամբ գործադրուած է, որուն արգիւնքը եղած է՝

- 1895ին 300,000 զոն, Համիդի օրով,
- 1909—ին 30,000 զոն, Ասանալի մեջ, Իսթիհասի օրով,
- 1915—ին 2,000,000 Իսթիհասի օրով,
- 1918—ին 20,000 Իսթիհասի օրով, (Կարս—Ալեքսանդրապոլ),
- 1918—ին 20,000 Իսթիհասի օրով, (Բաքու),
- 1919 Յուլիս 10,000 Բեմալի օրով, (Կիլիկ—Էսկի եւ Կրննըլար),
- 1921 Ապրիլ, 20,000 Բեմալի օրով, (Հահրն), (Անիդ Մուխար արտաքին գործ, նախարարն էր),
- 1922—ին 10,000 Բեմալի, օրով, (Բիւրաւոր աղեհալներ Խզմիր):

Ո՛Վ ՀՆԱՐԵՑ

— Ո՛վ է այն մարդը, որ մարդկութեան ամենամեծ բարեքը ըրաւ:

— Բասթէօրը, ըսաւ մէկը քովէս:

— Սթէֆէնսընը, ըսաւ ուրիշ մը:

— Ո՛չ, Մարգօնին, ըսաւ երրորդ մը, մարդը անթիւը հնարեց:

— Իսկ էտիսընը կրամօֆօնը հրնարեց, ըսաւ պարասէր երիտասարդ մը քովէս:

Եւ այսպէս սկսան բոլոր ներկաները իրենց գիտցած մեծ ու պզտիկ հնարիչներուն թուումն մասանցը ընելու: Միայն անկիւնի հրեան է որ չէր խօսեր:

— Բարեկամ, դուն ինչո՞ւ կարծիքդ չես յայտնար, հարցուցի իրեն:

— Ըստ իս, ըսաւ հրեան մօրուքը շոյելով, աշխարհի էն մեծ մարդը այն է որ տոկոսը հնարեց...

Ի՞նչ է այդ մարդը կնոջ մը համար: Մէկ ջիւղը հանուած ակոսայ: Ի՞նչ է կինը այդ մարդուն համար: Բերանին մէջ մի ցաւատ ակոսայ:

* * * Եթէ մէկու մը քսակին բեռ ես, յիմար ես անկէ յարգանք և պատիւ սպասելու համար:

* * * Անգլիացիին և Ամերիկացիին գոե՛րիկը երեսդ ի վեր կ'ըսէ օտարական, իսկ ամենազարգացածը մտքին մէջէն:

— (Գրագրին) Թորոն, միտքս ձգէ, միւսիւնին փարան շաբաթ զըրկենք:

— Ի՞նչ որ, գալ շաբթու կուտամ:

— Քանի՞ փարադ պիտի իջ եղաւ, կամաց կամաց:

— Նիւթապէս նեղ վիճակ մը ունիմ եղբայր, կը ցաւիմ որ չպիտի կրնամ տալ:

— Է՛յ չունենամ նէ հոգի՞ս պիտի առնես: